**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ԿՈԼԵԳԻԱ**

---

# ՈՐՈՇՈՒՄ

30 հունիսի 2017 թվականի **թիվ 74** քաղ. Մոսկվա

## Անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների հետ կապված առանձին հարցերի մասին

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի 50-րդ ենթակետին եւ 266-րդ հոդվածի 12-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝

անձնական օգտագործման տրանսպորտային միջոց հանդիսացող ավտոտրանսպորտային եւ մոտոտրանսպորտային միջոցների եւ ավտոտրանսպորտային եւ մոտոտրանսպորտային միջոցների կցորդների առանձին տեսակների ցանկը,

անձնական օգտագործման տրանսպորտային միջոց հանդիսացող ավտոտրանսպորտային, մոտոտրանսպորտային միջոցների շարժիչի թողարկման պահն ու աշխատանքային ծավալը որոշելու կարգը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի հունիսի 30-ի
թիվ 74 որոշմամբ

**ՑԱՆԿ**

**անձնական օգտագործման տրանսպորտային միջոց հանդիսացող ավտոտրանսպորտային եւ մոտոտրանսպորտային միջոցների եւ ավտոտրանսպորտային եւ մոտոտրանսպորտային միջոցների կցորդների առանձին տեսակների**

1. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքում դասակարգվող՝ գլխավորապես մարդկանց փոխադրելու համար նախատեսված թեթեւ մարդատար ավտոմոբիլներ եւ շարժիչային այլ տրանսպորտային միջոցներ (բացառությամբ բժշկական նպատակների համար հատուկ նախատեսված ավտոմոբիլների):

2. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքում դասակարգվող քվադրոցիկլներ, ձյունագնացներ, ձյունաճահճագնացներ, մոտոամենագնացներ եւ ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթեւեկելու համար չնախատեսված շարժիչային այլ տրանսպորտային միջոցներ (բացառությամբ ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթեւեկելու համար չնախատեսված մրցարշավային ավտոմեքենաների):

3. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8711 ապրանքային դիրքում դասակագվող մոտոցիկլներ, մոպեդներ, մոտոռոլլերներ:

4. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 ապրանքային դիրքում դասակարգվող շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ նախատեսված առավելագույնը 12 մարդ, ներառյալ՝ վարորդին փոխադրելու համար, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8704 21 եւ 8704 31 ապրանքային դիրքերում դասակարգվող շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ նախատեսված մինչեւ 5 տոննա ներառյալ լրիվ զանգվածով բեռներ փոխադրելու համար:

5. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8716 10 ապրանքային դիրքում դասակարգվող՝ մինչեւ 3,5 տոննա, ներառյալ՝ լրիվ զանգվածով կցորդներ (բացառությամբ ավտոմոբիլների փոխադրման համար նախատեսված կցորդների), «տուն-ավտոկցորդ» տեսակի կցորդներ՝ նախատեսված բնակության կամ ավտոտուրիստների համար:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի հունիսի 30-ի
թիվ 74 որոշմամբ

# ԿԱՐԳ

## Անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ հանդիսացող ավտոտրանսպորտային, մոտոտրանսպորտային միջոցների շարժիչի թողարկման պահն ու աշխատանքային ծավալը որոշելու

1. Սույն կարգով սահմանվում են անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ հանդիսացող ավտոտրանսպորտային, մոտոտրանսպորտային միջոցների (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) շարժիչի թողարկման պահն ու աշխատանքային ծավալը որոշելու կանոնները:

2. Տրանսպորտային միջոցի շարժիչի թողարկման պահը, այն է՝ արտադրման ամսաթիվը, եւ աշխատանքային ծավալը որոշվում են հայտարարատուի եւ մաքսային մարմնի կողմից՝ հետեւյալի հիման վրա՝

տրանսպորտային միջոցի շարժիչի արտադրման ամսաթվի եւ աշխատանքային ծավալի մասին նախորդ գրանցման պետությունում այդ միջոցի գրանցումը հաստատող փաստաթղթերում պարունակվող տեղեկատվություն,

տրանսպորտային միջոցն արտադրողի մասին տեղեկատվություն, որը ծածկագրված է այդ միջոցի նույնականացման համարում կամ պարունակվում է ավտոտրանսպորտային միջոցի թափքի, ամրաշրջանակի նույնականացման պիտակների, ցուցանակների եւ մոտոտրանսպորտային միջոցի շարժիչի շրջանակի նույնականացման պիտակների, ցուցանակների վրա:

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված տեղեկատվության բացակայության կամ տրանսպորտային միջոցի շարժիչի թողարկման պահը եւ (կամ) աշխատանքային ծավալը դրա հիման վրա միանշանակ որոշելու անհնարինության դեպքում, ինչպես նաեւ նշված տեղեկատվությունը ստուգելու նպատակներով, տրանսպորտային միջոցի շարժիչի թողարկման պահը եւ (կամ) աշխատանքային ծավալը որոշվում են հայտարարատուի կողմից տեղեկատվության օժանդակ աղբյուրների հիման վրա. որպես այդպիսիք կարող են կիրառվել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունում (այսուհետ՝ անդամ պետություն) տրանսպորտային միջոցն արտադրողի ներկայացուցչի եզրակացությունը, անդամ պետության առեւտրաարդյունաբերական պալատի (այլ համանման կազմակերպության) կամ անդամ պետության փորձագիտական կազմակերպության եզրակացությունը, ինչպես նաեւ այլ տեղեկատու եւ տեղեկատվական աղբյուրներ:

4. Սույն կարգի 2-րդ կետում նշված տեղեկատվության բացակայության կամ տրանսպորտային միջոցի շարժիչի թողարկման պահը եւ (կամ) աշխատանքային ծավալը դրա հիման վրա միանշանակ որոշելու անհնարինության դեպքում, ինչպես նաեւ մաքսային հսկողություն իրականացնելու նպատակներով (այդ թվում՝ այդ միջոցը թողարկելուց հետո), տրանսպորտային միջոցի շարժիչի թողարկման պահը եւ (կամ) աշխատանքային ծավալը որոշվում են մաքսային մարմնի կողմից տեղեկատվության օժանդակ աղբյուրների հիման վրա. որպես այդպիսիք կարող են կիրառվել անդամ պետությունում տրանսպորտային միջոցն արտադրողի ներկայացուցչի եզրակացությունը, անդամ պետության առեւտրաարդյունաբերական պալատի եզրակացությունը (այլ համանման կազմակերպության), մաքսային փորձագետի (փորձագետի) եզրակացությունը, ինչպես նաեւ այլ տեղեկատու եւ տեղեկատվական աղբյուրներ:

Մաքսային մարմինն իրավունք ունի կիրառելու նախկինում սույն կարգի 3-րդ կետին համապատասխան օգտագործված եւ հայտարարատուի կողմից ներկայացված՝ տեղեկատվության օժանդակ աղբյուրներ:

5. Եթե սույն կարգի 2-4-րդ կետերի հիման վրա որոշվել է տրանսպորտային միջոցի արտադրման տարեթիվը, ապա թողարկման պահ է համարվում դրա արտադրման տարվա հուլիսի 1-ը, եթե որոշվել են արտադրման տարեթիվն ու ամսաթիվը՝ արտադրման ամսվա 15-ը:

Եթե սույն կարգի 2-4-րդ կետերի հիման վրա տրանսպորտային միջոցի շարժիչի աշխատանքային ծավալը չի որոշվել, ապա աշխատանքային ծավալ է համարվում շարժիչի այն առավելագույն աշխատանքային ծավալը, որը կարող է սահմանվել արտադրողի կողմից տրանսպորտային միջոցի համապատասխան մոդելի համար՝ տեղեկատու եւ տեղեկատվական աղբյուրների համաձայն: